АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРМЯНО-РУССКИЕ ОТНОШЕНИЯ В XVIII ВЕКЕ

1760—1800 гг.

СБОРНИК ДОКУМЕНТОВ

ТОМ IV

Под редакцией акад. АН АрмССР М. Г. НЕРСИСЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1990

Բարձրապատիւ և գերազանց կառավարչիդ մեծի
Պաւլ Սարգիչ ահարկու զօրապէտիդ մեծաւ
խոնարհութեամբ զայս ինչ արզ առնեմք

Յայտնի եղև մեզ զամենայն բարերարութիւնս և զողորմութիւնս մարդասիրութեան ձերոյ սակս անտիրացեալ ազգիս մերոյ և հաւատեցաք ի թղթոյ տեառն Յօվսէփայ արքի և փառազարդ եպիսկոպոսին։ Արդ, մեք ոչ եմք երկբայ ի փրկութենէ մերմէ, որ ի ձեռն ամենապատուելոյդ և խնամակալութեամբ խնամակալին մերոյ գերափայլ և մեծ իշխան քնէզին ընկալնելոց եմք զողորմութիւն յամէնողորմ և բազմագութ տիրուհոյն և ակն ունիմք փութով տեսանել, վասն զի երկարութիւն բանից և գործոց ձերոց՝ ճըշտումն և նուազութիւն բերէ մնացորդացս զանազանակերպ և բազմահնար մեքենայք սոցին, որոց վասն փղձկեալ սրտիւ արտասուաթոր աչօք և աղէխարշ մորմոքմամբ աղաղակեմք առ ողորմած և բազմագութ տեառնդ արագահաս առնել զողորմութիւն մինչ կենդանի եմք և ի յետին շունչս, զի մեռելոյն ոչինչ օգտէ՝ տեղն որքան զօրեղ իցէ։

Վերջին աղերս ծառայիցդ այս է, զի մինչև ցայժմ որքան խնամք որ ունեցեալ ես ի սրտի քում առ ողորմելի ազգս մեր ըստ գրեցելոյ հոգևորի հօրն մերոյ տեառն Յօվսէփայ արքեպիսկոպոսին զայնն բազմապատիկս արասցես ի փառս խաչելոյն և սոսկալի չարչարանաց նորին, հասուցանելով զաղաչանաց թու[ղ]թս մեր առ մեծագոյն և հզօր տիրուհոյն և առ արժանապատիւ և մեծանուն իշխան քնէազ Գրիգոր Ալէքսանդրիչ Պօտէ[մ]կինին շարժելով զնոսա կրկին խնամս և ողորմութիւնս, քանզի ընդարձակէ ժամանակս, զի առիւծք ի գուբս ննջին և աղուէսք ի դաշտս ճեմին, և յուսամք թերևս յաջողութեամբն ամենազօրին աստուծոյ հասցին ձեռք ձեր ի մեզ հանդերձ ողորմութեամբ և տեսցեն աչք մեր զփրկութիւն և զբարեկեցութիւն մեր ձեռամբ ձերով և այլն ամենայն ի թղթոյ տեառն Յօվսէփայ հարազատին ձերոյ իմասջիք։